

Ո Ւ Խ Ե Լ Ե Մ Պ Լ Ե Ք

Ուխեկմ Պէտք, համաշխարհային ամենաանուժկու եւ հայակասկ մտքերէն մին է, որուն մահուան հարիւրասեակը տօնեց Անգլիա երկու տարի առաջ: Աննշմար իր ժամանակակիցներու համար, այսօր ան կը դասուի մարդկութեան գերազոյն բանաստեղծներու կարգը: Անգրհայեցողական հրաշալի տեսիւններու եւ մարդարէական անօրինակ նկրչնչումներու աղղեցութեան տակ, ան արտապրած է այսպիսի սքանչելի էջեր ուր իրական աշխարհը պատրանք մը կը թուի ըլլալ և որ զգայութիւններու սահմանէն անդին կը պատկերեն հոգեկանութեան խորհրդասքող եւ անպարազիծ տիեզերք մը իրական: Ինք, Ուխեկմ, հնն է, աննիւթական եւ անարդիւ, որ կը սւանայ արծուօրէն բարձրագոյն այերցը իր մտաշխարհին, տեսնելու համար Աստված որուն

հետ կը խօսի, զիտելու համար հրեշտակները որ կը զրօսնուն: Իր մեծագոյն ուժը եղած է նկրհայեցողութիւնը, հանճարի իրական բոցը, որով ան արտակարգօրէն քնարերգակ բանաստեղծ է եւ խոռվիչ ինքնատպութեամբ արուեստագտէ: Մարդկութիւնը, առաւել քան դար մը յառաջդիմութենէ վերջ միայն կրցաւ հասկնալ այս լուսաւոր իմացականութեան արժէքը, ապագայ բազմաթիւ սերունդներ զեռ երկիւղածօրէն պիտի յառին այս տեսլապաշտ եւ սեմպոլիսթ բանաստեղծին: Մենք ոչինչ ունինք իրմէ թարգմանուած. ներկայ կառը որ գրուած է 1777էն առաջ եւ առանց վերնազրի, իր սեմպոլիսթ զրականութեան սկզբնաւորութիւնն է, ուր յայտնի չէ թէ ո՞վ ակնարկել կ'ուզէ հեղինակը իր «Նէ»ով:

ՏԱՐԹ. ՄԻՀՐՈՅՆ ՔԵՇԻՇԵԱՆ

ԱՅՆ ԱՏԵՆ ՆԵ ԾՆԱԻ ՏՃԳՈՅՆ ՓԱՓԱՔԸ

Այն ատեն նէ ծնաւ տժգոյն Փափաքը, հայր Հետաքրիքրաւթեան, միշտ կոյս և երիտասարգ: Յետոյ՝ պողպատեայ Ծուլութիւնը, որմէ յառաջ եկաւ Տգիտութիւնը որ իր կարգին ծնաւ Զարմացումը: Այս բալորը Երկիւղէն յառաջացած աստուածներ են, որովհետեւ այս վերջինները իրենց նման սեռ ցունին ընտաւ, ինքնածին են եւ եթէ ուղեն, իրարու կը խառնուին արտագրելու համար զօրաւոր ուժեր:

Նէ զանանք չէր ճանչնար բնաւ: Աւկայն եւ այնպէս անոնք ամենքն ալ Ամօ-

թին հետ կը ճակատին եւ կը զօրացնեն անոր տկար թեւը: Հիմակ լոյսը ծագեցաւ եւ սկիեզօծ արեւը իր աշեղ շարժումն սկըսաւ զարթուցանելու համար պաղ հողը իր Ուրախութեան ճաճանչներով: Բայց Հպարտութիւնը արթնցաւ եւ բնաւ չգիտցաւ թէ Ուրախութիւնը ծնած էր եւ հանելով իր յատուկ ընդերքէն թունտուր սերմերը, ներարկեց զանոնք Ամօթ հրէշին, որմէ ծնաւ Փասասիրութիւնը՝ սովալով արջնագործի նման: Հպարտութիւնը զայն կը կրէ իր կուրծքին մէջ եւ բոլոր Աստուածները